

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N° 135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ


ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Աֆրիկա և Ավստրալիա թեմաների ամփոփումը Վենի դիգրամի օրինակով
Ուսուցիչ՝	Վարդանանք կրթահամալիր Մխիթարյան Էլիզա Նազարեթի
Խումբ՝	
Վերապատրաստող՝	Շաշիկյան Սամսոն Արտավազի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1 Ներածություն----- 3-4 էջ
- 2 Վեճի դիագրամ-----5 էջ
- 3 Աֆրիկա թեմայի առանձնահատկությունները-----6-10 էջ
- 4 Ավստրալիա թեմայի առանձնահատկությունները-----11-17 էջ
- 5 Աֆրիկա և Ավստրալիա մայրցամաքներ թեմաների ամփոփումը Վեճի դիագրամի օրինակով-----18 էջ
- 6 Եզրակացություն-----19 էջ
- 7 Օգտագործված գրականություն-----20 էջ

Ներածություն



Աշխարհագրությունը Երկրի մասին հին և հետաքրքրաշարժ գիտություններից մեկն է: Այն միավորում է բազմաթիվ ոլորտների իմացությունը՝ օգնելով գիտնականներին և հետազոտողներին ավելի լավ հասկանալ այս զարմանալի մոլորակը:

Աշխարհագրություն կոչվել է « բոլոր գիտությունների մայր»՝ մարդկանց տալով շատ « ինչու՞» - ների պատասխաններ:


Յուրաքանչյուր առարկա դասավանդելիս, պետք է առաջին հերթին այն լավ իմանալ: Այս տեսակետը ապացուցման կարիք

չունի: Սակայն առարկայի իմացությունը դեռ չի ապահովում լիակատար դասավանդում: Մարդը կարող է լինել հիանալի մասնագետ, խոշոր գիտնական, սակայն չկարողանա արդյունավետ դասավանդել դպրոցում: Հնարավոր է, որ չկարողանա մատչելի և դյուրին լուսաբանել ուսումնասիրվող հարցը: Այդպես է լինում հիմնականում սկսնակ ուսուցիչների մոտ: Իհարկե հանդիպում են ուսուցիչներ, որոնք չունենալով մեթոդական պատրաստվածություն հիանալի դասավանդում են առարկան, դրանք ինքնուսուցիչներն են, սակայն նրանցից յուրաքանչյուրն ունի տարիների գործնական հզոր փորձ: Այդ փորձը սկսվել է դպրոցում իր ուսանելիության տարիներից: Յուրաքանչյուր ոք, ով սովորել է դպրոցում, պարտադիր կերպով հայտնվել է դասավանդման այս կամ այն մեթոդի ազդեցության ներքո: Բնականաբար, սկսնակ ուսուցիչը գիտակցաբար կամ ենթագիտակցաբար ընդօրինակում է իր ուսուցիչներին, հատկապես նրանց, ում սիրել է: Նախորդների աշխատանքի արդյունքում կուտակված փորձը շարունակվում է հետնորդների կողմից, բայց սրանով ուսուցչի մեթոդական պատրաստումը չի վերջանում: Նա անպայման անրադառնում է դասագրքերին, քարտեզներին, նկարներին և այլ ձեռնարկներին, որոնք պարունակում են մեթոդիկայի տարրեր: Այդ տարրերը առավել շատ են դասագրքերում: Դասագրքերը ուղղակի գրքեր չեն, դրանք կազմված են որոշակի ծրագրերի հիման վրա և աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Յուրաքանչյուր փաստ, օրինակ, հարց, առաջադրանք խորապես մտածված և մեթոդապես նպատակաուղղված է: Դասագրքերը միանգամից չեն ստեղծվել, դրանցում ներառել է դասավանդման պատմության ողջ պատմական փորձը: Սկսնակ ուսուցիչը, հետևելով դասագրքին սովորում է տիրապետել դասավանդման մեթոդիկային և փորձում է

գտնել դասավանդման փորձի իր ճանապարհը: Չետևաբար, յուրաքանչյուր ուսուցիչ ,առարկան գիտենալուց բացի, պետք է կարողանա այն դասավանդել, դրա համար պետք է տիրապետի աշխարհագրական գիտելիքների փոխանցման արդյունավետ եղանակներին՝ ուսուցման մեթոդներին, ձևերին ու տեխնոլոգիաներին: Այդպիսի մեթոդներից մեկը դասի ամմփոփումն է Վենի դիագրամի մեթոդով:

Չետագոտական աշխատանքի նպատակն է հեշտացնել աշակերտի ընկալումը, Վենի դիագրամի օգնությամբ ամրապնդել ձեռք բերած գիտելիքները Աֆրիկա և Ավստրալիա թեմաներից:

Վեննի դիագրամ



Վեննի դիագրամ(սաև կիրառվում է Էյլեր-Վեննի դիագրամ անվանումը) ունիվեւսալ բազմության մի քանի ենթաբազմությունների միջև գոյություն ունեցող հարաբերությունների սխեմատիկ պատկերումն է: Վեննի դիագրամի վրա Ս ունիվերսալ բազմության կետերը պատկանում են որոշակի ուղղանկյան տեսքով, որում ներդրված են մյուս բազմությունները շրջանների կամ այլ երկրաչափական պատկերների տեսքով:

Ի տարբերություն Վեննի դիագրամի՝ Էյլերի դիագրամը արտահայտում է չհատվող բազմությունների միջև հարաբերությունները: Էյլերի շրջանները ծագել են Արիստոտելի սիլլոգիստիկայի հիման վրա, իսկ Վեննի դիագրամները ստեղծվել են մաթեմատիկական տրամաբանության խնդիրների լուծման համար: Ներքևի նկարում բնական թվերից կազմված երեք բազմությունների համար Էյլերի և Վեննի դիագրամներն են:

Էյլերի դիագրամ




Վեննի դիագրամ



Վեննի դիագրամը կազմվում է երկու շրջանագծերով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն փորձված, արդյունավետ մեթոդ է՝ նստումնասիրվող դասանյութում միևնույն և տարբեր հասկացությունների, հասարակական – աշխարհագրական երևույթների ու օբեկտների միջև փոխառնչությունները բացահայտելու համար: Օրինակ կարելի է հանձնարարել՝ ինչո՞վ են տարբերվում Աֆրիկայի և Ավստրալիայի բնությունը: [] Դիագրամները կարելի է ներկայացնել բազմաթիվ ձևերով, օրինակ՝ վեցանկյուն ձևանմուշով, եռանկյունի

ձևանմուշով, շրջանաձև և այլն: Ուսուցիչների համար առավել հարմար է շրջանաձև դիագրամների կազմումն ու կիրառումը, քանի որ այն ավելի պատկերավոր և հեշտ ընկալելի է դարձնում ամփոփվող կյուլթը աշակերտի համար:



Աֆրիկայի առանձնակատկությունները

Աֆրիկայի աշխարհագրական դիրքը յուրահատուկ է: Աֆրիկան միակ մայրցամաքն է, որի գրեթե կենտրոն մասով անցնում է հասարակածը: Գլխավոր միջօրեականը անցնում է Նրա արևմտյան մասով: Աֆրիկայի մեծ մասը գտնվում է արևադարձային լայնություններում: Մայրցամաքը հյուսիսից - հարավ ձգվում է 8000 կմ., իսկ արևմուտքից - արևելք՝ 3500-ից (հարավում) 7500 կմ: Նրա ծայրակետերն են՝ հյուսիսում՝ Էլ Աբյադ հարավում՝ Ասեդի, արևմուտքում՝ Ալմադի , արևելքում՝ Ռաս Չաֆուն հրվանդանները:

Աֆրիկայի ակերը արևմուտքից և հյուսիսից ողողում են Ատլանտյան, իսկ արևելքից՝ Յնդկական օվկիանոսի ջրերը: Հյուսիսում Աֆրիկան Եվրոպայից բաժանվում է Ջիբրալթարի խոր ու նեղ նեղուցով և Միջերկրական ծովով, իսկ հյուսիս-արևելքում՝ Ասիայից՝ Սուեզի ջրանցքով, Կարմիր ծովով, Բաբ-ել-Մանդեբի նեղուցով և Ադենի ծոցով:

Աֆրիկայի ակազիծը քիչ է կտրատված: Խոշոր ծովածոցը Գվինեականն է, խոշոր կղզին՝ Մադագասկարը, խոշոր թերակղզին՝ Սոմալին:

Մադագասկարը մայրցամաքից բաժանվում է Մոզամբիկի լայն նեղուցով: Աֆրիկայի ռելիեֆում տիրապետում են տարբեր բարձրության սարահարթերը, և միայն ծայրամասերում են բարձրանում լեռները: Առավել բարձր են արևելյան շրջանները, որտեղ գտնվում են Արևելաաֆրիկյան սարահարթը և Եթովպական բարձրավանդակը: Աֆրիկայի հյուսիսում ձգվում են Ատլասի, հարավում՝ Դրակոնյան և Կապի լեռները: Ամենաբարձր

գագաթը Կիլիմանջարոն է՝ 5895 մ: Ամենացածր կետը՝ Ասսալի իջվածքն է -156մ:



Կիլիմանջարո լեռ



Ասսալ լիճ


Կլիման- Աֆրիկան, շնորհիվ աշխարհագրական դիրքի, հանդիսանում է ամենատաք մայրցամաքը:

Նրա տարածքում է գտնվում աշխարհի խոշորագույն անապատներից մեկը՝ Սահարան, որի տարածքում՝ Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիի մերձակայքում գտնվող Էլ-Ջուֆ տեղանքում է գրանցվել ամենաբարձր ջերմաստիճանը՝ +58,1°C: Աֆրիկայի կլիմայական ևս մեկ առանձնահատկությունն կայանում է նրանում, որ այն գրեթե ամբողջությամբ գտնվում է տաք ջերմային գոտու սահմաններում և միայն ծայր հարավային և հյուսիսային փոքրիկ մասն է գտնվում բարեխառն ջերմային գոտու սահմաններում: Աֆրիկայի տարբեր տարածքների կլիմայական առանձնահատկությունները մեծապես պայմանավորված են կլիմայաստեղծ գործոնների յուրահատկություններով:

Աֆրիկայի տարածքում առանձնացնում են հասարակածային, մերձհասարակածային, արևադարձային և մերձարևադարձային կլիմայական գոտիները:

Ընդ որում հասարակածային գոտին տարածվում է 0–7° լայնություններում՝ զբաղեցնելով Գվինեական ծոցի ափամերձ տարածքները և Կոնգոյի գոգավորությունը: Նրա շուրջ տարածվում է մերձհասարակածային գոտին՝ զբաղեցնելով Սուդանի և Արևելաաֆրիկական սարահարթերի տարածքները և հանդիսանալով Աֆրիկայի ամենամեծ տարածք զբաղեցնող կլիմայական գոտին: Մերձհասարակածային գոտուց հյուսիս և հարավ տարածվում է արևադարձային գոտին, որի սահմաններում են գտնվում Աֆրիկայի խոշորագույն անապատները: Հարավային կիսագնդում արևադարձային կլիմայական գոտին ընդհուպ մոտենում է հասարակածին: Այս գոտին բաժանվում

Է 2 մարզի՝ արևադարձային անապատային և գոտու արևելյան հատվածում՝ արևադարձային խոնավ: Աֆրիկայի ծայր հյուսիսում և հարավում տարածվող մերձարևադարձային գոտին նույնպես բաժանվում է 2 մարզի՝ մերձարևադարձային միջերկրածովային և գոտու արևելյան հատվածում՝ **մերձարևադարձային խոնավ:**



Աֆրիկայում գետերը բաշխված են խիստ անհավասարաչափ. հասարակածային և մերձհասարակածային գոտում բազմաթիվ են ջրառատ գետերը, իսկ արևադարձային գոտում քիչ են ու ծանծաղ, իսկ որոշ շրջաններում (Սահարայի, Կալահարիի ներքին շրջաններ) ընդհանրապես չկան: Ամենաերկար գետը Նեղոսն է (արաբերեն՝ Էլ Բախր, երկարությունը՝ 6671 կմ), որի դերը անփոխարինելի է գետահովտում ապրող ժողովուրդների համար: Ամենաջրառատը Կոնգոն է (աշխարհում երկրորդը՝ Ամազոնից հետո): Այն երկու անգամ հատում է հասարակածը, առաջացնում է

բազմաթիվ սահանքներ ու ջրվեժներ: Խոշոր գետերից են Նիգերը, Օրանժը և Չամբեզին: Վերջինիս վրա է գտնվում աշխարհի բնության հրաշալիքներից մեկը՝ Վիկտորիա ջրվեժը (բարձրությունը՝ 120 մ, լայնությունը՝ 1800 մ): Ջրի աղմուկը լսվում է տասնյակ կիլոմետրերի վրա, առաջացնում է ջրափոշու հսկայական սյուներ, դրա համար Էլ բնիկներն այն անվանում են «աղմկող ծուխ»: Աֆրիկայում շատ են լճերը՝ Տանգանիկա (խորությամբ աշխարհում երկրորդը՝ Բայկալից հետո), Նյասա, Մոբուտու Սեսե Սեկո, Վիկտորիա: Ուշագրավ է Սահարա անապատի հարավում գտնվող Չադ լիճը, որի ափագիծը կայուն չէ. ամառային խոնավ սեզոնին, երբ նրա մեջ թափվող Շարի գետը վարարում է, լճի մակերեսը մեծանում է, իսկ ձմռանը՝ փոքրանում:^[3]

Բուսական կենդանական աշխարհը –

Աֆրիկայի բուսականության աշխարհը ոչ միայն բազմազան է, այլև առանձին տեսակներ աչքի են ընկնում մի շարք յուրահատկություններով: Դրանց շարքում կարելի է

Եւել հասարակածային խոնավ մշտադալար անտառների կենդանիներից գորիլային և ցեցե ճանճը: Առաջինն ամենամեծ պրիմատն է աշխարհում, իսկ երկրորդը յուրահատուկ է նրանով, որ մեկ խայթոցից տնային կենդանիները սատկում են, իսկ մարդու մոտ առաջանում է քնախտ հիվանությունը, որի դեպքում մարդը «հավերժ քուն» է մտնում:

Գորիլա և ցեցե ճանճ: Հետաքրքիր է, որ առաջինը բացարձակ անօդակալն է երկրորդի առջև



Բույսերից յուրահատուկ են լիանները, որոնք իրենց գոյությունը պահպանելու համար մագլցում և փաթաթվում են ծառերի վրա՝ ջունգլիներին տալով մեզ ծանոթ տեսքը և առաջացնելով անանցանելի ցանցեր: Սավաննաների և նոսրանտառների բնակիչներից իրենց յուրահատկություններով հանրահայտ են առյուծը, որին ուժի և հզորության համար անվանում են «կենդանիների արքա», ընծուղտը, որն ամենաբարձրահասակ ցամաքային կենդանին է (հասակը հասնում է 5–6 մ), հեպարդը՝ ամենաարագավազ կենդանին աշխարհում (գարգացնում է մինչև 110 կմ/ժ արագություն), աֆրիկյան փիղը՝ ամենախոշոր ցամաքային կենդանին (հասակը կարող է լինել 3 մ-ից ավելի, իսկ քաշը մոտ 6 տոննա), աֆրիկյան ջայլամը՝ ամենախոշոր թռչունը աշխարհում (հասակը հասնում է 2,7 մ, իսկ քաշը կարող է հասնել 130 կգ), որի դրած մեկ ձուն համարժեք է հավի 12 ձվին

և նեղոսյան կոկորդիլոսը՝ կոկորդիլոսների կարգի ամենախոշոր ներկայացուցիչը (երկարությունը կարող է գերազանցել 5 մ, իսկ քաշը՝ 500 կգ):

Յեպարոյ և աֆրիկյան ջայլամ: Երկուսին էլ միավորում է արագավազ լինելը, սակայն եթե հեպարոյը այդ առավելությունը օգտագործում է որսի ժամանակ, ապա ջայլամը՝ գիշատիչներից փախչելիս:



Անապատների և կիսաանապատների զոնայում առաջին հերթին աչքի են ընկնում ուղտը, որը կարողանում է օրեր շարունակ դիմանալ առանց ջուր խմելու և դրա համար օգտագործվում է որպես փոխադրամիջոց անապատային տարածքներում, ինչպես նաև վելվիչիա բույսը, որի տերևներն աճում են ամբողջ կյանքի ընթացքում, ինչի շնորհիվ Նամիբ անապատում աճող այս բույսը հայտնի է որպես ամենաերկար տերևներով բույսն աշխարհում:

Ուղտը և վելվիչիան չորային պայմաններին լավագույնս հարմարված տեսակներից են Աֆրիկայում

[5]




Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները

Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասը բաղկացած է Ավստրալիա մայրցամաքից և դրան հարակից բազմաթիվ կղզիներից, որոնք միասին կազմում են Օվկիանիա կոչվող տարածաշրջանը:

Աշխարհամասի աշխարհագրական դիրքի առանձնահատկություններն են՝

1. մայրցամաքի կենտրոնով անցնում է հարավային արևադարձը, որին ավելի մոտ է հյուսիսային եզրը (Յորք հրվ.), քան հարավայինը:
2. Մայրցամաքն ամբողջությամբ գտնվում է Տաք ջերմային գոտում, իսկ աշխարհամասը՝ նաև Բարեխառն:
3. Ինչպես մայրցամաքի, այնպես էլ աշխարհամասի ափերը ողողում են Ջնդկական (մայրցամաքի արևմտյան ափեր) և Խաղաղ օվկիանոսի (մայրցամաքի արևելյան ափեր) ջրերը:
4. Աշխարհամասը գտնվում է միաժամանակ բոլոր 4 կիսագնդերում, քանի որ Օվկիանիայում գտնվող Կիրիբատի կղզին միակն է, որի տարածքով անցնում է և՛ հասարակածը, և՛ 180° միջօրեականը, իսկ մայրցամաքն ամբողջությամբ գտնվում է հարավային և արևելյան կիսագնդերում:
5. Մայրցամաքին առավել մոտ է Ասիան, որից այն բաժանվում է մի խումբ կղզիներով և Թորրեսի նեղուցով:



Ավստրալիայի ափագիծը քիչ է կտրտված, քանի որ այս մայրցամաքը չի ենթարկվել խոշոր սառցապատումների ազդեցությանը, ինչպես նաև մայրցամաքը չի հանդիսանում տեկտոնական ակտիվ գոտի:

Հայտնի է, որ Ավստրալիայի ափերի մոտով անցնում են երկու օվկիանոսային հոսանքներ՝ արևմուտքում Արևմտաավստրալական սառը հոսանքը, իսկ արևելքում՝ Արևելաավստրալական տաք հոսանքը: Ավստրալիայի տարածքում առանձնացնում են նաև երկու խոշոր թերակղզի՝ Առնհեմլենդը և Նրանից արևելք գտնվող Քեյփ Յորքը և երկու նեղուց, որոնք բաժանում են մայրցամաքը հարակից կղզիներից: Այդ նեղուցներն են. հյուսիսում՝ Թորրեսի, որը բաժանում է Ավստրալիան Նոր Գվինեայից և միևնույն ժամանակ կապ է հանդիսանում Կորալյան և Արաֆուրյան ծովերի միջև, ինչպես նաև հարավում գտնվող Բասսի նեղուցը, որը բաժանում է Ավստրալիան Թասմանիա կղզուց: Բացի այս երկու նեղուցները, աշխարհամասում հայտնի է նաև Կուկի նեղուցը, որը, գտնվելով Նոր Չելանդիայում, միմյանցից բաժանում է Հյուսիսային և Հարավային կղզիները:

Ավստրալիայի ափերը ողողող ծովերն ու ծոցերն են Թիմորի ծովը, որն արևելքում սահմանակից է Արաֆուրյան ծովին, որն էլ իր հերթին Թորրեսի նեղուցով կապվում

Ե Կորալյան ծովին: Արաֆուրյան ծովից հարավ-արևելք գտնվում է Կարպենտարիայի ծոցը՝ Առնհեմլենդ և Զեյլի Յորք թերակղզիների միջև: Կորալյան ծովն իր հերթին ամենատաք ծովն է Ավստրալիայի ափերի մոտ և դրա տարածքում է գտնվում Մեծ Արգելախուլը, որը մոտ 2000 կմ հյուսիսից հարավ ուղղությամբ ձգվող կորալային ծագման կղզիներ են և հանդիսանում են բնության հրաշալիքներից մեկը՝ գրավելով միլիոնավոր տուրիստների ուշադրությունը: Ավստրալիայի արևելքում է Ֆիջիի ծովը, որը հարավ-արևմուտքում սահմանակից է Թասմանի ծովին, որն իր անունը ստացել է Ավստրալիան բացահայտած հոլանդացի ծովագնաց Աբել Թասմանի պատվին: Ավստրալիայի հարավում է ամենախոշոր ծովածոցը՝ Մեծ Ավստրալական ծոցը: Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասը բաղկացած է Ավստրալիա մայրցամաքից, որի տարածքն ամբողջությամբ պատկանում է Ավստրալիա պետությանը: Բացի մայրցամաքային մասից, Ավստրալիա պետության տարածք է հանդիսանում նաև հարավում գտնվող ամենախոշոր կղզին՝ Թասմանիան, որը Ավստրալիայից բաժանվում է Բասսի նեղուցով:

Ավստրալիայից հյուսիս գտնվում է Օվկիանիայի ամենախոշոր կղզին՝ Նոր Գվինեան, Ավստրալիայից բաժանվում է Թորրեսի նեղուցով, իսկ կղզու տարածքում են երկու պետություններ՝ Ինդոնեզիան և Պապուա Նոր Գվինեան: Ավստրալիայից հարավ-արևելք է գտնվում Նոր Զելանդիան, որը կազմված է Զյուսիսային և Զարավային կղզիներից, որոնց միջև էլ Կուկի նեղուցն է: Օվկիանիայում են նաև բազմաթիվ ավելի փոքր կղզիներ, որոնցից հայտնի են Նոր Կալեդոնիան, Ֆիջին, Կիրիբատին և այլն:

Կլիման- Չնայած որ Ավստրալիան ամենափոքր մայրցամաքն է, նրա տարբեր հատվածների կլիմայի վրա ազդող գործոնները բազմազան են և աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններով՝ կապված տարվա եղանակների և արևի զենիթային դիրքի տեղաշարժերի հետ: Ավստրալիայի կլիման քննարկելիս կարևոր է հիշել այն հանգամանքը, որ Ավստրալիան ամբողջությամբ գտնվում է հարավային կիսագնդում: Սա նշանակում է, որ տարվա 4 եղանակների օրացույցային ժամանակահատվածներն այստեղ համապատասխանում են հյուսիսային կիսագնդի հակադարձ եղանակների ամիսներին: [4]

Քանի որ Ավստրալիան ամենաչոր մայրցամաքն է, նրա ջրագրական ցանցը թույլ է զարգացած: Մասնավորապես տարածքի 60%-ը պատկանում է ներքին հոսքի ավազանին, որտեղ բացակայում են մշտական հոսք ունեցող գետերը, իսկ **ժամանակավոր հոսք ունեցող գետերը՝ քրիկները**, ջրով են լցվում միայն պատահական անձրևների

ժամանակ: Մշտական հոսք ունեցող գետերը հիմնականում գտնվում են մայրցամաքի արևելքում և հյուսիսում: Դրանք կարճ են, սակայն ջրառատ, քանի որ մեծամասամբ սկիզբ են առնում Մեծ Ջրբաժան լեռնաշղթայի արևելյան լանջերից և սնվում են այդտեղ տեղացող առատ տեղումներից: Քանի որ Ավստրալիան մեծամասամբ տաք ջերմային գոտու սահմաններում է և այստեղ բացակայում են բարձր լեռները, ներքին ջրերում բացակայում են նաև սառցադաշտերը: Միևնույն ժամանակ Կենտրոնական հարթավայրի տարածքում է գտնվում Մեծ Արտեզյան ավազանը՝ ամենամեծ ստորերկրյա ջրի ավազանը մայրցամաքում:

Լճերը նույնպես քիչ են և, լինելով մնացորդային ծագման, հիմնականում ծանծաղ են: Քանի որ դրանցից խոշորները գտնվում են ներքին չորային շրջանների տարածքում, դրանց մակարդակը տարվա ընթացքում զգալիորեն տատանվում է: Ավստրալիայի ամենախոշոր և ամենաջրառատ գետը Մուրրեյն է, որը սկիզբ է առնում Մեծ Ջրբաժան լեռնաշղթայի արևմտյան լանջերից, հոսում է մերձարևադարձային կլիմայական գոտու սահմաններում և Մեծ Ավստրալական ծոցի տարածքում թափվում Զնդկական օվկիանոս:



Մուրրեյի խոշորագույն վտակն է Դամլինգը, որն ավելի երկար է, քան Մուրրեյ գետը, սակայն շատ ավելի սակավաջուր, իսկ որոշ տարիների ընդհանրապես ցամաքում է իրականացվող մեծ ջրառի պատճառով: Մուրրեյ-Դամլինգ համակարգի ջրհավաք ավազանը մոտ 1 մլն կմ² է, իսկ համատեղ երկարությունը ավելի քան 3600 կմ: Կենտրոնական հարթավայրի տարածքում է հոսում ամենախոշոր ժամանակավոր

հոսքը՝ Կուլպերս-քրիկը, որը թափվում է Էյր լիճ: Էյր լիճն իր հերթին ամենախոշոր լիճն է մայրցամաքում և ունի մնացորդային ծագում:



Էյր լիճը և իր մեջ թափվող Կուլպերս-քրիկը:

Դրանից հարավ գտնվում է մեծությամբ երկրորդ լիճը Ավստրալիայում՝ Թորրենսը, որն ունի մոտ 5700 կմ² մակերես (ավելի քան 33 ամենամեծ մարզը՝ Գեդարքունիքը), սակայն ընդամենը 8 մ առավելագույն խորություն: Ներկայումս այն բնության հատուկ պահպանվող տարածք է, որտեղ մուտք գործելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն:

Բուսական կենդանական աշխարհը-

Ավստրալիայի բուսական կենդանական աշխարհը ոչ միայն ամենաէնդեմիկն է մյուս մայրցամաքների համեմատ, այլև ամենայուրահատուկներից մեկը, քանի որ կենդանիների և բույսերի էվոլյուցիան այստեղ անցել է մնացյալ աշխարհից մեկուսի: Ավստրալիայի բուսական աշխարհի յուրահատուկ ներկայացուցիչներից է **Էվկալիպտո**, որին հսկայական քանակի ջուր կլանելու հատկության շնորհիվ անվանում են բնական պոմպ և աշխարհի շատ վայրերում այն օգտագործում են ճահիճները բնական ճանապարհով չորացնելու համար: Այսպես, մեր հյուսիսային հարևան Վրաստանում Էվկալիպտներ են աճեցնում երկրի արևմուտքում՝ Կոլխիդայի դաշտավայրի տարածքում՝ գերիսոնավ հողերը չորացնելու համար:

Էվկալիպտի անտառները յուրահատուկ են նաև նրանով, որ այնտեղ դժվար է ստվեր գտնել, քանի որ դրանց տերևները կողային մասով են ուղղվում դեպի արևը՝ դրանով նվազեցնելով ստվերի քանակը: Այս ծառատեսակի անտառներում է բնակվում մեկ այլ յուրահատուկ կենդանի՝ **կոալան**, որը պարկավոր արջ է: Այն սնվում է միայն Էվկալիպտի տերևներով և ընդհանրապես ջուր չի խմում, քանի որ Էվկալիպտի տերևներում պարունակվող ջրի քանակը լիովին հագեցնում է նրանց ծարավը: Յուրահատուկ է նաև այն, որ կոալայի մատնահետքերը շատ նման են մարդու մատնահետքերին և նույնիսկ խոշորացույցի օգտագործմամբ դրանք հնարավոր չէ տարբերել: Պարկավոր կենդանիներից ամենահայտնին **կենգուրուն** է, որը հանդիսանում է Ավստրալական Միության խորհրդանիշերից մեկը և դրա տարբեր տեսակներ հանդիպում են Ավստրալիայի բոլոր բնական զոնաներում:



Աշխարհի տարբեր վայրերում ցավալիորեն կազմակերպում են կենգուրուների անօրինական մարտեր:

Դրանցից ամենափոքրերը ունեն մի քանի սանտիմետր հասակ, իսկ ամենախոշորները՝ 2-3 մ: Կենգուրուները տեղաշարժվում են հիմնականում ցատկելով և խոշոր տեսակների ցատկի երկարությունը կարող է հասնել 10 մ: Ավստրալիայի կենդանական աշխարհի յուրահատուկ ներկայացուցիչ է նաև **Էմու ջայլամը**, որը «չթռչող» խոշոր թռչուն է:

Բացառիկ տեսակներ են հանդիսանում **բադակտուցը և եքիդնան**: Վերջիններս ձվածին կաթնասուններ են, այսինքն ձու են ածում և թխում թռչնի պես, սակայն ձագերին կերակրում կաթով, ինչպես կաթնասունները: Ընդ որում բադակտուցը բնակվում է խոնավ արևադարձային անտառների գետերի հարևանությամբ և իր կյանքի մի զգալի մասը

անցկացնում է ջրում, իսկ եքիղևան ամբողջովին ցամաքային կենսակերպ վարող կենդանի է:



Բաղակազմը և եքիղևա:

Յուրահատուկ են նաև նաև **դինգո շունը**, որը բերվելով Եվրոպայից վայրենացել է և սկսել մեծ վնաս տալ անասնապահությանը, ինչի համար Ավստրալիայում մի քանի հազար կմ երկարությամբ պատնեշ են կառուցել անասնագլուխը դինգոյից պաշտպանելու համար և **Թասմանյան հրեշը**: Ի տարբերություն դինգոյի, Թասմանյան հրեշը հեշտությամբ ենթարկվում է վարժեցման և կարող է ապրել նաև տան պայմաններում: [7]

Աֆիկա և Ավստրալիա մայրցամաքներ թեմաներիի ամփոփումը Վենիսի դիագրամի օրինակով

Դասի թեմա --- Աֆիկա և Ավստրալիա մայրցամաքներ թեմաներիի ամփոփումը Վենիսի դիագրամի օրինակով:

Դասի նպատակը-- Չարգացել աշակերտի տրամաբանական և գիտական մտածողությունը,արագ կողմնորոշվելու, համեմատելու, բնական երևույթների պատճառահետևանքային բազմաթիվ կապերի բացահայտման, գնահատման և դրանք մարդուն ծառայեցնելու կարողությունը, ինչպես նաև աշակերտի մեջ մշակել բնության եզակի տարրերն արժևորելու համոզմունք՝ դիտարկելու ոչ միայն օրինաչափ երևույթները,այլև գնահատելու բնության մեջ ընթացող ոչ բնական գործընթացների ազդեցությունը մեր մոլորակի բնության բազմազանության վրա: Աշակերտը կարողանա համեմատել, վերլուծել և ինքնուրույն անել եզրակացություններ:


Ցուցադրվող նյութերը—Աշխարհի ֆիզիկական քարտեզ, աշխարհի կլիմայական քարտեզ, աշխարհի բնական զոնաների քարտեզ:

Դասի ընթացքը-- Ոսուցիչը՝ օգտագործելով վերը նշված ցուցադրական նյութերը ամբողջական պատկերացում է տալիս Աֆրիկա և Ավստրալիա մայրցամաքների մասին, այնուհետև գրում է ամփոփիչ հարցերը և պատասխանները աշակերտները լրացնում են Վենիսի դիագրամի տեսքով:

1. Ո՞ր հին մայրցամաքի մաս են Աֆրիկան և Ավստրալիան:
2. Ո՞ր մայրցամաքն է ամենամոտը Աֆրիկային և Ավստրալիային:
3. Ո՞ր օվկիանոսներն են ողողում Աֆրիկայի և Ավստրալիայի ափերը:
4. Ի՞նչ դիրք ունեն մայրցամաքները հասարակածի. գլխավոր միջօրեականի, հյուսիսային և հարվային արևադարձերի նկատմամբ:
5. Ինչպիսի՞ն է մայրցամաքների մակերևույթը:
6. Ո՞ր կլիմայական գոտիներն են տարածվում Աֆրիկայում և Ավստրալիայում:
7. Ինչպիսի՞ն են Աֆրիկայի և Ավստրալիայի ջրագրական ցանցը:
8. Ի՞նչ յուրահատկություն ունեն մայրցամաքների բուսական և կենդանական աշխարհը:
9. Ո՞ր բնական զոնաներն են գերակշռում մայրցամաքներում:
10. Ի՞նչ Էնդեմիկ բուսատեսակներ և կենդանատեսակներ կան Աֆրիկայում և Ավստրալիայում:

Աֆրիկա

Ավստրալիա



Եզրակացություն

Աշակերտին հասցնել այն կարևոր գաղափարը, որ ցանկացած տրածքի բնական պայմանների բազմազանությունը մարդու տնտեսական գործունեության բնույթը պայմանավորված են դրանց աշխարհագրական դիրքով: Աշակերտները համոզվեն , որ կիման , ներքին ջրերը, բնական պայմանները, անկախ մարդու կամքից կարևոր տեղ ունեն Երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթի ձևավորման և օրգանական աշխարհի զարգացման գործում: Եվ որ ամսակարևորն է աշխարհագրական թաղանթի հատկանիշներից միասնականությունը, զոնայականությունը արտահատվեց այս դիագրամի օգնությամբ, երբ համեմատվեցին Աֆրիկան և Ավստրալիան:

Օգտագործված գրականություն

1. Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան . <<Աշխարհագրություն 6>> ուսուցչի ձեռնարկ: Երևան 2013
2. Վիքիպեդիա ազատ հանրագիտարան
3. Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան . <<Աշխարհագրություն 6>> դասագիրք Երևան 2013
- 4 . <https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/6-dasaran/mayrcamaqner-14519/avstraliayi-kliman-nerqin-jrery-14571/re-7fe69d25-ed07-4ce0-8514-21cad7957b81>
5. <https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/6-dasaran/mayrcamaqner-14519/afrikayi-bnakan-zvonanery-14526/re-cfa708ab-e646-4364-8d49-29df0a75b3f0>
6. <https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/6-dasaran/mayrcamaqner-14519/avstraliayi-kliman-nerqin-jrery-14571/re-50200294-7ca2-4c56-b165-12cae17840d3>
7. <https://www.imdproc.am/p/ashkharhagrutyun/6-dasaran/mayrcamaqner-14519/avstraliayi-bnakan-zvonanery-14573/re-93685337-c648-4365-a601-5bb0046117da>

